

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Պատանդ Դանիէլ



Written by: Edward Hughes
Illustrated by: Jonathan Hay

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
Adapted by: Mary-Anne S.

Story 31 of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada


License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Դանիէլ եւ իր երեք ընկերները իսրայել կ'ապրէին:
Օր մը հզօր թագաւոր մը եկաւ իրենց երկիրը եւ
բոլոր խելացի երիտասարդ մարդիկը իրենց երկրէն
հեռացուց եւ իր երկիրը տարաւ:

Թագաւորին անունը երկար եւ մեծ անուն էր
Նաբուգոդոնոսոր եւ ան շատ-շատ հեռու երկրի մը
մէջ կ'ապրէր, որ Բաբելոն կը կոչուէր:



1




2

Երիտասարդ մարդիկը շատ լաւ կը խնամուէին Բաբելոնի մէջ: Թագաւորը ամենէն փայլուն, խելացի եւ ամենալաւ երիտասարդները գատած էր ամբողջ աշխարհէն: Ան ծրագրեց, որ անոնց սորվեցնէ Բաբելոնի լեզուն, որպէսզի անոնք դառնան ծառաները եւ օգնեն զինք թագաւորութիւնը կառավարելու համար:




3

Ուտելիքը լաւ էր: Երիտասարդ մարդիկը կերան ինչ որ թագաւորը կ'ուտէր: Բայց Դանիէլ եւ իր ընկերները կը մերժէին ուտել, որովհետեւ այդ ուտելիքները նուիրած էին սխալ աստուածներու:



4

Դանիէլ խոստացաւ, որ որեւէ սխալ բան մը չգործէ իր Աստուծոյ դէմ: Իսրայէլի Աստուածը հրամայեց իր ժողովուրդը որպէսզի երբեք չպաշտէր սխալ աստուածներ եւ կուռքեր:



5

Դանիէլ ինկորեց իր ուսուցիչէն, որպէսզի արտօնէ զինք, որ ան թագաւորին ճաշէն չուտէ: Եթէ թագաւորը գիտնայ պիտի բարկանայ: Բայց Աստուած Դանիէլը այդ մարդուն նախընտրելիս դարձուց:



6

Ան համաձայնեցաւ Դանիէլի եւ իր ընկերներուն քննութենէ անցնել: Տասը օր անոնք միայն ջուր պիտի խմէին եւ միայն բանջարեղէն պիտի ուտէին:



7

Տասը օր ետք Դանիէլ եւ իր ընկերները շատ աւելի առողջ երեւցան, քան անոնք, որոնք թագաւորին ուտելիքէն կ'ուտէին: Ուրեմն անոնց արտօնուեցաւ բանջարեղէնով եւ ջուրով շարունակել:




8

Այս երիտասարդ մարդիկը պատուեցին Աստուծոյ եւ Աստուած անոնց պատուեց: Աստուած անոնց տուաւ գիտութիւն եւ վարպետութիւն իրենց սորված մարդերուն մէջ եւ Դանիէլ ստացաւ խելացիութիւն հասկնալու ամեն տեսիլքները եւ երագները:




9

Երեք տարիներ ետք Բաբելոնի դարոցին մէջ ամեն երիտասարդ մարդիկը ներկայացան Նաբուգոդոնոսոր թագաւորին: Ան Դանիէլը եւ իր երեք ընկերները ընտրեց իբր ամենալաւը բոլորին մէջէն:



10

Իրաւ, թագաւորը գիտցաւ, որ Դանիէլ շատ աւելի խելացի էր քան բոլոր մարդիկը իր թագաւորութեան մէջ:



11

Գիշեր մը, թագաւորը գէշ երագ մը տեսաւ: Ան կանչեց իր կախարդները, աստղագետները եւ ըսաւ անոնց. "Երագ մը տեսայ, եւ իմ հոգիս կ'ուզէ գիտնալ, թէ ինչ է նշանակութիւնը": Խելացի մարդիկը պատասխանեցին.



12

"Օ՛, թագաւոր, յաւիտեան ապրիս: Պատմէ եզարդ ծարաներուդ եւ մենք քեզի կը թարգմանենք նշանակութիւնը":



13

Թագաւորը պատասխանեց. "Ոչ: Պետք է որ ինծի ըսէք, թէ ինչ էր իմ երագիս նշանակութիւնը: Եթէ չկատարէք կտոր-կտոր պիտի ընեմ ձեզի եւ ձեր բնակարանները պիտի այրեմ:




14

Բայց եթե ըսեք ինձի երագիս
 նշանակութիւնը, - շարունակեց
 թագաւորը.- պիտի ստանաք
 նուէրներ եւ մեծ պատիւ":
 Անշուշտ որեւէ մէկը այս
 խելացի մարդոցմէ չէր
 կրնար թագաւորին
 երագը բացատրել:




15

Թագաւորին խելացի մարդիկը ըսին թագաւորին:
 "Մարդ մը չկար աշխարհի վրայ, որ կրնայ
 կատարել քու պահանջքը:




16

Միայն աստուածները կրնան, եւ անոնք երկրի
 վրայ չեն բնակիր": Թագաւորը շատ զայրացաւ.
 "Քանդեցէք բոլոր խելացի մարդիկը Բաբելոնի",
 հրամայեց ան:




17

Երբ զինուորները Դանիէլի
 եկան, ան Արիովքի, թագաւորին
 հրամանատարին, ըսաւ. "Ինչո՞ւ
 թագաւորը կը կործանէ ամէն
 խելացի մարդիկը", ետքը
 Արիովք ըսաւ. Դանիէլի ամէն
 ինչ որ պատահեր էր: Դանիէլ
 գնաց տեսնելու թագաւորը:
 Ան ատելի ժամանակ
 ինդրեց թագաւորէն,
 որ երագին ճիշդ
 բացատրութիւնը
 տայ:



18

Յետոյ Դանիէլ իր տունը գնաց,
 եւ ամէն ինչ իր ընկերներուն
 Սեդրակի, Միսաքի եւ
 Աբեղնագովին պատմեց: Դանիէլ
 չէր գիտեր երագին իմաստը, բայց
 գիտեր, որ մէկը ամէն ինչ գիտէ:
 Այդ մէկն ալ Աստուած էր: Ուրեմն
 Դանիէլ եւ իր ընկերները
 աղօթեցին:




19

Աստուած Դանիէլի ցոյց տուաւ երագը եւ
 անոր իմաստը: Դանիէլ փառք տուաւ երկնքի
 Աստուծոյ ըսելով. "Օրհնուած է Աստուծոյ անունը
 յաւիտեանս յաւիտենից, որուն է արքայութիւնը եւ
 խելացութիւնը":




20

Դանիել շտապեց թագաւորին քով եւ ըսաւ. "Երկնքի մէջ Աստուած մը կայ, որ ամէն ինչ կը բացատրէ": Ան թագաւորին բացատրեց, թէ ինչ երագեց եւ թէ այդ ինչ նշանակէ:



21

Երբ Նաբուգոդոնոսոր թագաւորը իմացաւ երագը եւ անոր բացատրութիւնը, ան Դանիելի առջեւ ինկաւ եւ ըսաւ.




22

"Իրաւ քու Աստուածդ, աստուածներուն Աստուածն է եւ Տէրը թագաւորներուն եւ գաղտնիքներու բացայայտողը, որ կրցար այս գաղտնիքը բացատրել", ետքը թագաւորը Դանիելը կարելոր մարդ դարձուց եւ իրեն մեծ նուէրներ տուաւ:



23

Անոր կառավարիչ հռչակեց ամբողջ Բաբելոնի վրայ եւ բոլոր խելացի մարդոց պետը:



24

Պատանդ Դանիել

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Դանիել 1 - 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներք քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

